ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» ապրիլի 2012թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման N 4 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1). «II. Առանձնացված ստորաբաժանումներ» գլխի «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմեր» բաժնի.

ա. «Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» մասի 4-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «190» թիվը փոխարինել «170» թվով, իսկ 5-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «170» թիվ՝ «165» թվով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «1485.0» թիվը փոխարինել «1460.0» թվով, իսկ «Ամբողջը» տողի «19530.0» թիվը՝ «19505.0» թվով,

բ. «Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» մասի 4-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «190» թիվը փոխարինել «170» թվով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «1315.0» թիվը փոխարինել «1295.0» թվով, իսկ «Ամբողջը» տողի «14900.0» թիվը՝ «14880.0» թվով,

գ. «Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» մասի 4-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «190» թիվը փոխարինել «170» թվով, իսկ 5-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «170» թիվը՝ «165» թվով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «1485.0» թիվը փոխարինել «1460.0» թվով, իսկ «Ամբողջը» տողի «25840.0» թիվը՝ «25815.0» թվով,

դ. «Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» մասի 4-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «190» թիվը փոխարինել «170» թվով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «1045.0» թիվը փոխարինել «1025.0» թվով, իսկ «Ամբողջը» տողի «10880.0» թիվը՝ «10860.0» թվով,

ե. «Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» մասի 4-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «190» թիվը փոխարինել «170» թվով, իսկ 5-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «170» թիվը՝ «165» թվով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «1485.0» թիվը փոխարինել «1460.0» թվով, իսկ «Ամբողջը» տողի «17855.0» թիվը՝ «17830.0» թվով,

զ. «Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» մասի 4-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «190» թիվը փոխարինել «170» թվով, իսկ 5-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «170» թիվը՝ «165» թվով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «1485.0» թիվը փոխարինել «1460.0» թվով, իսկ «Ամբողջը» տողի «28170.0» թիվը՝ «28145.0» թվով,

է. «Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» մասի 4-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «190» թիվը փոխարինել «170» թվով, իսկ 5-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «170» թիվը՝ «165» թվով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «1485.0» թիվը փոխարինել «1460.0» թվով, իսկ «Ամբողջը» տողի «21075.0» թիվը՝ «21050.0» թվով,

ը. «Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» մասի 4-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «190» թիվը փոխարինել «170» թվով, իսկ 5-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «170» թիվը՝ «165» թվով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «1485.0» թիվը փոխարինել «1460.0» թվով, իսկ «Ամբողջը» տողի «21760.0» թիվը՝ «21735.0» թվով,

թ. «Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» մասի 4-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «190» թիվը փոխարինել «170» թվով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «1045.0» թիվը փոխարինել «1025.0» թվով, իսկ «Ամբողջը» տողի «8880.0» թիվը՝ «8860.0» թվով,

ժ. «Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» մասի 4-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «190» թիվը փոխարինել «170» թվով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «1045.0» թիվը փոխարինել «1025.0» թվով, իսկ «Ամբողջը» տողի «5170.0» թիվը՝ «5150.0» թվով,

ժա. «Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» մասի 4-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «190» թիվը փոխարինել «170» թվով, իսկ 5-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «170» թիվը՝ «165» թվով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «1485.0» թիվը փոխարինել «1460.0» թվով, իսկ «Ամբողջը» տողի «19380.0» թիվը՝ «19355.0» թվով,

ժբ «Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» մասի 4-րդ կետի 4-րդ և 6-րդ սյունակների «190» թիվը փոխարինել «170» թվով և այդ կապակցությամբ

«Ընդամենը» տողի «1315.0» թիվը փոխարինել «1295.0» թվով, իսկ «Ամբողջը» տողի «18345.0» թիվը՝ «18325.0» թվով։

2) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» գլխի «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմեր» բաժնի «Ամբողջը՝ վարչական շրջաններ» տողում «211785» թիվը փոխարինել «211510» թվով։

3) «Ամբողջը» տողում «313939,89» թիվը փոխարինել «313664.89» թվով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար-փոխվարչապետի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի (Այսուհետ՝ նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 06.02.2012թ. հ.03-Ն հրամանով փոփոխություններ են կատարվել համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբում և ենթախմբում ընդգրկվող պաշտոնների անվանացանկում:

Նշված անվանացանկում կատարված փոփոխությունների արդյունքում անհրաժեշտություն է առաջացել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի առաջատար խմբի 2-րդ ենթախմբում ընդգրկված Երևանի թվով 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի գլխավոր մասնագետների թվով 12 պաշտոնների ամսական դրույքաչափերը և առաջատար խմբի 3-րդ ենթախմբում ընդգրկված Երևանի Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի առաջատար մասնագետների թվով 7 պաշտոնների ամսական դրույքաչափերը համապատասխանաբար սահմանել անվանացանկի համայնքային ծառայության պաշտոնների առաջատար խմբի 3-րդ ենթախմբի և համայնքային ծառայության պաշտոնների կրտսեր խմբի 1-ին ենթախմբի ամսական դրույքաչափերին համապատասխան:

Երևանի քաղաքապետարանի հաստիքացուցակով Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնային դրույքաչափը սահմանված է 190.0 հազ. դրամ, իսկ առաջատարինը՝ 170.0 հազ. դրամ: Նշված պաշտոնների ենթախմբերի դրույքաչափերի փոփոխություն կատարելու դեպքում գլխավոր մասնագետի պաշտոնային դրույքաչափը սահմանվելու է 170.0 հազ. դրամ, իսկ առաջատարինը՝ 165.0 հազ. դրամ: Արդյունքում նախատեսվում է ամսական աշխատավարձի ֆոնդի տնտեսում, որը կազմում է 275.0 հազ. դրամ, սակայն Երևան քաղաքի բյուջեում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ առաջարկվում է Երևանի ավագանու 06.07.2009թ. N3-Ա որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ նախատեսվում է Երևանի 2012 թվականի բյուջեի ծախսերի նվազեցում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ